

# ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Չնայած «վերևների» մի շարք հավաստիացումներին, մեր հանրապետության տրանսպորտային ամենակենսական երակի շրջափակումը Ադրբեջանի կողմից շարունակվում է: Երեկ, օրինակ, այդ ճանապարհով Հայաստան է մուտք գործել միայն 5 գնացք (նախորդ օրվանից 8-ով պակաս), այն դեպքում, երբ ամենօրյա միջին նորման 20—25 գնացք է: Ըստ որում, ինչպես և նախորդ օրերին, չի ստացվել պարենամթերքով, վառելիքով բեռնավորված և ոչ մի վագոն: Տեղ հասած բեռները, հատկապես աղետի գոտու համար նախատեսված տնակները, վնասված են, ջարդված ու թալանված:

ՆԿԱՐՆԵՐՈՒՄ.—

∅ Ահա այսպիսի վիճակում են Հայաստան հասնում հարևան հանրապետությունով անցած բեռները:

∅ Անգործությունից ձանձրանում են պողպատե մայրուղիները:

○ Նամակ ձեռագիր...

Լուսանկարները Մ. ՇԱՀԲԱԶՅԱՆԻ (Արմենպրես)



